Բանաստեղծը ուզում է, որ իր գրուածքները լսելի լինեն միշտ, անգամ իր մահից յետոյ:

Բեւերլի Հիլզի հեծանուորդը 1952

Այս աշխատանքում փորձել եմ նկարագրել մարդու էութիւնը:

Եօթանասուն Հազար Ասորացի 1934

Ամէն ոք այս աշխարհում ինչ-որ մէկից լաւն է եւ ինչ-որ մէկից վատը:

Յարութիւն 1935

Երեխայի ուղին թարմ է, էներգիայով հարուստ, հետաքրքիր, անմեղ, պատկերաւոր, առողջ եւ հաւատով լի, իսկ տարեցներինը՝ աւելի շատ թոռոմած, հոգեպէս պղտոր, զուրկ երեւակայութիւնից, անառողջ եւ հաւատը կորցրած:

Իմ Սիրտը Լեռներում է 1939

Հաւատում եմ, որ կան ճանապարհներ, որոնք տանում են դէպի կեանք, այլ ոչ թէ մահ:

Անդրանիկը եւ Հայաստանի Ոգին 1936

Իմաստուն մարդիկ լաւն են, որովհետեւ իմաստութիւն են ձեռք բերում անյաջողութիւնների միջով անցնելիս:

Սարոյեան

Իմ կեանքում կատարեալ անյաջողութեան եմ ենթարկուել, բայց միշտ իրականութեան հետ եմ աշխատել:

Իմ Սիրտը Լեռներում է 1939

Դու մերժում ես փառքը, դաւաճանում ինքդ քեզ, դու դաւաճանում ես մարդկային ռասսան, երբ հաւատում ես, որ ճշարտութեան ուղին ընկած է ամբոխի հիմքում, ընդունում ես այն, հաստատում, որովհետեւ քեզ այդպէս յարմար է, եւ պէտք չի լինում փնտրել իրական ճշմարտութիւնը եւ չես գնում ճշմարտութեան ուղիով. կարծես թէ այն գոյութիւն չունի:

Ահա եկաւ, գնում է, ինքդ գիտես՝ ով

Հրամանը, որ յայտնաբերեցի, հրաման չտալն է:

Բեւերլի Հիլզի հեծանուրդը 1952

Իրական պատմութիւնը երբեք հնարաւոր չէ պատմել: Դա անպատմելի է: Իրականութիւնը (որպէս իրականութիւն) անհասանելի է, անցնելով ժամանակի միջով: Կարիք չկայ նայել անցեալին, հաւաքագրել այն, հետազօտել, բացառութեամբ արուեստի. այն մտքի իրականութիւնն է:

Բեւերլի Հիլզի հեծանուրդը 1952

Անհնար է չնշել այն, որ մեր աշխարհը պատուած է անյաջողութեամբ, ատելութեամբ, մեղքով եւ վախով:

Նամակ Ռոբերտ Է. Շերուուդին 1946

Արուեստի դերն է ստեղծել այնպիսի մի աշխարհ, որը տանելի լինի:

Մարդկային Կատակերգութիւն 1943

Շատ հասարակական վայրերում, ձանձալի, անհեթեթ, դաժան, կոպիտ, տհաս, կամ նոյնիսկ թերի մարդկանցից կամ իրադարձութիւններից պէտք է փնտրել, առանձնայատուկ, լաւ, հումօրային պահէր, եւ ես այդպէս էլ արել եմ:

Բեւերլի Հիլզի հեծանուրդը 1952

Ես երբեք չեմ հետաքրքրուել ակնյայտի մանրամասներով, թէ ով ինչ արեց, բայց թւում է, որ իւրաքանչիւր ոք հետաքրքրուած է ակնյայտ բաներով, հմայուած դրանով եւ յաւիտեան կրկնում է այն մանրամասները, որ շատ վաղուց ես արդէն կշռադատել եմ, չափել եւ դուրս շպրտել որպէս անտեղի եւ անօգուտ: Եթէ կարող էք չափել այն, մի արէք: Եթէ կարող էք կշռադատել այն, անտեղի ժամանակ կը կորցնէք: Դուք ոչ մի բանից հետ չէք ընկնի: Պէտք չէ հասնել դրան: Իմ իմաստութիւնը տեսանելի էր, ինչպէս տեսողութիւնը: Ես նայեցի, տեսայ, հասկացայ, զգացի. «ահայ, թէ ուր ենք մենք գնալուէ:

Ահա եկաւ, գնում է, ինքդ գիտես՝ ով

Ոչ մի հիմք: Ամէնուր դատարկութիւն է: Ոչ մի հիմք:

Քո Կեանքի Ժամերը

Ամէն ոք այս կեանքում այս թէ այն կերպ մուրացիկ է, խոշոր կամ մանր: Քահանան Աստծուց բարութիւն է խնդրում, եւ թագաւորն էլ ինչ-որ մէկից ինչ-որ բան է մուրում: Երբեմն ժողովրդից հաւատարմութիւն է խնդրում, երբեմն աղաչում Աստծուն ներել իրեն: Ոչ ոք այս կեանքում չի ապրել 10 տարի չաղաչելով Աստծուն ներել իրեն:

Մուրացկանները

Դու միշտ պէտք է յիշես տալ ուրիշներին այն ամէնը, ինչ ունես: Անգամ եթէ տալը յիմարութիւն թուա: Դու պէտք է լինես ողորմած: Պէտք է տաս իւրաքանչիւրին, ով հանդիպում է քեզ կեանքում: Այդ դէպքում ոչ մի բան եւ ոչ ոք մոլորութեան չի մատնի քեզ: Եթէ գողին տաս ունեցածդ, նա չի կարողանայ գողանալ քեզանից, եւ այդ դէպքում նա այլեւս գող չի լինի: Եւ ինչքան տաս, այնքան աւելի շատ ես տալու:

Մարդկային Կատակերգութիւն

Ոչ սէրը, ոչ ատելութիւնը, ոչ էլ մարդկային կեանքի ամենաամուր հաւատարմութիւնը, չեն կարող փոխարինել մարդու հոգու ազատութեանը եւ բարի լինելու անհրաժեշտութեանը:

Բեւերլի Հիլզի հեծանուորդը 1952

Որն է մարդկային կեանքի նպատակը: Կենդանական մակարդակով վերցրած այն է՝ խուսափել հնարաւոր ցաւերից: Եթէ դա հնարաւոր չէ, ապա մարդկային մակարդակը կը մեղմացնի այդ ցաւը: Անձնական մակարդակում, մարդու նպատակն է լինել իւրայատուկ ի ծնէ, առանձնայատկութիւնը անաւարտ է, չնայած որ շատ անհատների մօտ այն աւարտւում է դեռ չսկսուած:

Ամէն մարդու իրաւունք է տրուած ապրելու եւ գործելու, եւ եթէ ինքը չի փոխում այս կեանքում ինչ-որ բան, ապա գոնէ փոփոխութիւնները պէտք է հասկանայ ինքուրոյն…

Մարդը դժբախտութիւն է, բայց նա կարող է խուսափել դժբախտութիւնից ուղղելով իր սեփական սխալները, եւ ուղղել, հասկանալ, ճանաչել, փոխել իր ճակատագիրը, որը ծնուել է իր հետ, որոնցից ամենագլխաւորն է՝ շարունակել կեանքը, փոխել իր իրաւունքները: Մարդ պէտք է վերադառնա իր ակունքներին ինքնուրոյն, եւ պահպանի իր իրաւունքները, ինչքան էլ որ դա դժուար եւ ցաւոտ լինի:

Ահա եկաւ, գնում է, ինքդ գիտես՝ ով

Բարոյապէս չմահանալու համար անհրաժեշտ է յոյս, զօրութիւն, ճշտութիւն եւ առողջ բանականութիւն:

Բեւերլի Հիլզի հեծանուորդը 1952

Ամենամեծ երջանկութիւնը այն է, երբ երջանկութիւն պահանջելու անհրաժեշտութիւն չկայ:

Իմ Սիրտը Լեռներում է 1939

Կեանքդ ապրիր այնպէս, որ նրա ընթացքում ոչ քեզ ոչ էլ քեզ շրջապատողներին չպատեն տհաճութիւնն ու մահը: Ամէնուր բարութիւն փնտրիր եւ երբ գտնես, դուրս հանիր նրան իր թաքստոցից, որպէսզի այն տեսանելի լինի բոլորի համար: Գտիր նրա համապատասխան տեղը եւ արժէքը, քանի որ այն կարող է կանգնեցնել մահը, չնայած որ անցօղիկ է: Յայտնաբերիր լուսաւորը, քանի որ այն հեռու է խարդախութիւնից: Եթէ առաքինութիւնը մէկի սրտում թաքնուել է՝ վախեցած այս աշխարհի չարիքներից, խրախուսիր նրան եւ դուրս հանիր իր թաքստոցից: Արհամարհիր արտաքինը, քանի որ այն արժէք չունի պարզ աչքում եւ բարի սրտում: Ոչ ոքի մի ենթարկուիր բայց եւ քեզ մի ենթարկիր մարդկանց: Յիշիր, որ ամէն մարդ նման է քեզ: Բոլորի մեղքերը նաեւ քոնն են, անմեղներն իրենց առաքինութիւնը նոյնպէս կիսում են քո հետ: Արհամարհիր չարն ու ատելութիւնը, բայց ոչ չար մարդկանց. ընդունիր սա: Եղիր բարի եւ սիրալիր, բայց կեանքիդ ծանր պահին, երբ կանգնած լինես սպանութիւն գործելու եզրին, սպանիր եւ մի զղջա դրա համար: Կեանքդ ապրիր այնպէս, որ կեանքիդ չաւելացնես աշխարհի վիշտն ու տառապանքը, այլ ապրես ժպիտով եւ բարութեամբ:

Նախաբան Վիլեամ Սարոյեանի Քո Կեանքի Ժամերը, Պիեսին Պուլիցերի Մրցանակի Յաղթող 1939

Ի հարկէ մարդկութիւնը հայ է: Այլ կերպ չի կարող լինել:

Ահա եկաւ, գնում է, ինքդ գիտես՝ ով

Ուսանելը, սովորելը, հարցնելը, կշռադատելը, յայտնաբերելը, ստեղծելը, տեղաբաշխելը, պահպանելը, կերտելը եւ տալը ընկած են հայի էութեան հիմքում:

Առաջին Այցը Հայաստան 1935

Ես այցելեցի Հայաստան, հէնց որ կարողացայ հաւաքել անհրաժեշտ գումար:

Առաջին այցը Հայաստան 1935

Ես սիրում եմ հայ ժողովրդին. նրանցից իւրաքանչիւրին: Սիրում եմ նրանց որովհետեւ նրանք մարդկութեան մի մասն են կազմում, ինչը ես միաժամանակ համարում եմ գեղեցիկ եւ խոցելի:

Առաջին այցը Հայաստան 1935

Ամբողջ աշխարհը եւ նրանում ապրող ամէն մի բանական էակ, բոլորինս է:

Իմ Սիրտը Լեռներում է 1939

Ահա այստեղ էլ կ'աւարտեմ այպես, ինչպէս սկսել էի.

Բանաստեղծը ուզումէ, որ իր գրուածքները լսելի լինեն միշտ, անգամ իր մահից յետոյ:

Բեւերլի Հիլզի հեծանուորդը 1952